1 Անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման (այսուհետ՝ Ռեեստրի վարում) պայմանագրի կնքում/վերակնքում

1.1 Ռեեստրի վարման պայմանագրի կնքում

№	Անվանումը
1.	Ռեեստրի վարման պայմանագրի կնքման դիմում:
2.	Թողարկողի պետական գրանցումը հավաստող փաստաթուղթ՝ (ՀՀ պետական գրանցման վկայականի դեպքում՝ ներառյալ բոլոր ներդիրներով)
3.	Թողարկողի գործող կանոնադրություն կամ կանոնադրությանը հավասարազոր (փոխարինող) հիմնադիր փաստաթուղթ:
4.	Թողարկողի գործադիր մարմնի լիազորությունները հավաստող փաստաթուղթ:
5.	Գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ:
6.	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), իսկ ոչ ռեզիդենտ Թողարկողների դեպքում՝ այլ համարժեք համարը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում):
7.	Տեղեկանք արժեթղթերի հավաստագրերի առկայության (տպագրման) մասին:
8.	Փաստաթղթերի նեկայացման օրվա դրությամբ ավարտված և արդյունքները ամրագրած տեղաբաշխման գործընթացի արդյունքում ձևավորված անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը (փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ ներառելով նաև տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ (Ընդ որում, ներկայացվող ցուցակում, պարտադիր լրացման ենթակա են յուրաքանչյուր Սեփականատիրոջ/Անվանատիրոջ ազգանունը և անունը կամ անվանումը, անձնագրի կամ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի տվյալները (բացառությամբ պետական մարմինների), համապատասխան դասի (առկայության դեպքում) բաժնետոմսերով սեփականատիրոջը տրամադրվող ձայների քանակը):
9.	Արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը կամ դրանց պատճենները (այդպիսի սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների առկայության դեպքում):
10.	Եթե Թողարկողն իրականացնում է նախկինում տեղաբաշխված արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխում, որի գործընթացը դեռ չի իրականացվել կամ ավարտվել կամ իրականացվել է մասամբ, կամ տվյալ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքները դեռ չեն ամրագրվել, ապա Թողարկողը Բանկին տեղեկություններ է ներկայացնում տեղաբաշխվող արժեթղթերի բնութագրիչների (դասը, իսկ դրա բացակայության դեպքում՝ տեսակը, քանակը, անվանական արժեքը և այլն), տվյալ արժեթղթերի թողարկման որոշման, տեղաբաշխման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ:
11.	ԱՄՏԾ կամ ԱՆԾ շնորհման հայտ, կամ տեղեկություններ տվյալ արժեթղթերին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված և գործող ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի վերաբերյալ, եթե այդպիսիք առկա են, և եթե ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի շնորհման և պահպանման պայմաններով նախկինում ներկայացված տեղեկությունները փոփոխված չեն:
12.	Լիազորագիր (լիազորված անձի առկայության դեպքում):
13.	Լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:
14.	Տեղեկություններ Թողարկողի վճարային գործակալի վերաբերյալ, որն իրավասու է Թողարկողի անունից կատարել վճարումներ արժեթղթերի սեփականատերերին (առկայության դեպքում):
15.	Ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում. ա. Իրավասու մարմնի (ռեեստրավարի կամ գրանցող այլ մարմնի) կողմից տրամադրված տեղեկություններ 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե նման տեղեկություններ առկա չեն

	հիմնադիր փաստաթղթերում), ներառյալ անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում սույն կետում նշված տեղեկությունները չեն պահանջվում, եթե ներկայացվում է կարգավորվող բորսայում ցուցակված լինելու մասին տեղեկատվություն (ներկայացվում է այն դեպքում, եթե Բանկը չի տիրապետում նշված ինֆորմացիային, որպես Հաշվի Օպերատոր): բ. Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը, գ.Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև (առաջին անգամ Բանկ դիմելիս)
16.	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում. ա. Գրանցող գործակալի կողմից թողարկված վկայագիր՝ գործադիր մարմնի ղեկավարի(ների), 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի մասին, կամ «Ընկերության կարգավիճակի և/կամ ղեկավար անձանց մասին վկայագիր» (Certificate of Incumbency), որը պարունակում է նշված տեղեկատվությունը, բ. 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող անձանց և իրական շահառուների նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (ֆիզիկական անձանց անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ, իրավաբանական անձանց կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և գրանցման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ) պատճենները, գ. Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև (առաջին անգամ Բանկ դիմելիս)

1.2 Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում

№	Անվանումը
1.	Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դիմում, որը Բանկի կողմից ընդունման արդյունքում համարվում է փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտ
2.	Թողարկողի պետական գրանցումը հավաստող փաստաթուղթ (ՀՀ պետական գրանցման վկայականի դեպքում՝ ներառյալ բոլոր ներդիրներով)
3.	Թողարկողի գործող կանոնադրություն կամ կանոնադրությանը հավասարազոր (փոխարինող) հիմնադիր փաստաթուղթ:
4.	Թողարկողի գործադիր մարմնի լիազորությունները հավաստող փաստաթուղթ:
5.	Գործադիր մարմնի ղեկավարի անձնագիր
6.	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Թողարկողների դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
7.	Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ) կամ արժեթղթերի նույնականացնող ծածկագիր (ԱՆԾ) շնորհման հայտ, կամ տեղեկություններ տվյալ արժեթղթերին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված և գործող ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի վերաբերյալ, եթե այդպիսիք առկա են, և եթե ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի շնորհման և պահպանման պայմաններով նախկինում ներկայացված տեղեկությունները փոփոխված չեն:
8.	Տեղեկություններ Թողարկողի վճարային գործակալի վերաբերյալ, որն իրավասու է Թողարկողի անունից կատարել վճարումներ արժեթղթերի սեփականատերերին (առկայության դեպքում):
9.	Համակարգում առկա դրամական պարտավորությունների մարումը հաստատող փաստաթուղթ (դրամական պարտավորությունների առկայության դեպքում):
10.	Լիազորագիր (լիազորվածի առկայության դեպքում):
11.	Լիազորված անձի անձնագրի պատճենը
12.	Ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում. ա. Իրավասու մարմնի (ռեեստրավարի կամ գրանցող այլ մարմնի) կողմից տրամադրված

	տեղեկություններ 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե նման տեղեկություններ առկա չեն հիմնադիր փաստաթղթերում), ներառյալ անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում սույն կետում նշված տեղեկությունները չեն պահանջվում, եթե ներկայացվում է կարգավորվող բորսայում ցուցակված լինելու մասին տեղեկատվություն (ներկայացվում է այն դեպքում, եթե Բանկը չի տիրապետում նշված ինֆորմացիային, որպես Հաշվի Օպերատոր) բ. Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը, գ. Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև (առաջին անգամ Բանկ դիմելիս)
13.	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում. ա. Գրանցող գործակալի կողմից թողարկված վկայագիր՝ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի, 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի մասին, կամ «Ընկերության կարգավիճակի և/կամ ղեկավար անձանց մասին վկայագիր» (Certificate of Incumbency), որը պարունակում է նշված տեղեկատվությունը, բ. 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող անձանց և իրական շահառուների նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (ֆիզիկական անձանց անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ, իրավաբանական անձանց կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և գրանցման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ) պատճենները, գ. Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև (առաջին անգամ Բանկ դիմելիս)

2 Կորպորատիվ գործողությունների և արժեթղթերի տեղաբաշխման գործառնությունների գրանցում

2.1 Արժեթղթերի տեղաբաշխում

№	Անվանումը
	2.1.1 Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի տեղաբաշխում
1.	Արժեթղթի տեղաբաշխման դիմում-հանձնարարական
2.	Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ) կամ արժեթղթերի նույնականացնող ծածկագիր (ԱՆԾ) շնորհման հայտ:
3.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից ընդունված թողարկման (տեղաբաշխման) որոշումը՝ ներառելով կամ կից ներկայացնելով արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կարգը, պայմանները և ժամկետները սահմանող փաստաթուղթը:
4.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից տեղաբաշխման արդյունքները հաստատող որոշումը, եթե արժեթղթերի տվյալ դասի համար նման որոշման կայացումը պահանջվում է օրենսդրությամբ:
5.	Արժեթղթերի տեղաբաշխման արդյունքերը պետական համապատասխան մարմնի կողմից գրանցման փաստը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե տեղաբաշխման արդյունքները ենթակա են պետական գրանցման:
6.	Կանոնադրության կամ կանոնադրության համապատասխան փոփոխություն, եթե տեղաբաշխման արդյունքները տվյալ փուլում ենթակա են կանոնադրության մեջ արտացոլման:
7.	Լիազորագիր (լիազորվածի առկայության դեպքում) և լիզորված անձի անձնագիր:
	2.1.2 Կարգավորվող շուկայում արժեթղթերի տեղաբաշխում
1.	Արժեթղթի տեղաբաշխման դիմում-հանձնարարական
2.	Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ) կամ արժեթղթերի նույնականացնող ծածկագիր (ԱՆԾ) շնորհման հայտ:

3.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից ընդունված թողարկման (տեղաբաշխման) որոշումը՝ ներառելով կամ կից ներկայացնելով արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կարգը, պայմանները և ժամկետները սահմանող փաստաթղթի պատճենը:
4.	Թողարկողի գրավոր հանձնարարական և Կարգավորվող շուկայի Օպերատորի արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշման պատճենը: Հանձնարարականում նշվում է նաև արժեթղթերի տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները կամ դրանց որոշման կարգը:

2.2 Կորպորատիվ գործառնություններ

№	Անվանումը
2.2.1 Արժեթղթերի անվանական արժեքի փոփոխմամբ, արժեթղթերի համախմբմամբ, արժեթղթերի բաժանմամբ, Թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերի մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերով փոխարկմամբ պայմանավորված կորպորատիվ գործառնություններ	
1.	Արժեթղթերի փոխարկման դիմում-հանձնարարական
2.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից ընդունված կորպորատիվ գործողության իրականացման վերաբերյալ որոշումը՝ ներառելով կամ կից ներկայացնելով արժեթղթերի փոխարկման կարգն ու պայմանները:
3.	Թողարկողի որոշմամբ մեկ տեսակի արժեթղթերի մեկ այլ տեսակի արժեթղթերով փոխարկման դեպքում փոխարկումն ապահովող արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) մասին Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից ընդունված որոշման պատճենը, եթե նշված փոխարկումն ուղեկցվում է փոխարկումն ապահովող արժեթղթերի տեղաբաշխմամբ:
4.	Արժեթղթերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային արժեթղթերի հետգնման կարգն ու պայմանները սահմանող փաստաթուղթը, եթե արժեթղթերի փոխարկումն իրականացվել է արժեթղթերի համախմբման ձևով:
5.	Կորպորատիվ գործողությունը պետական համապատասխան մարմնի կողմից գրանցման փաստը հավաստող փաստաթղթի պատճենը:
6.	Կանոնադրության կամ կանոնադրության համապատասխան փոփոխությունը
7.	Լիազորագիր (լիազորվածի առկայության դեպքում) և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:
2.2.2 Թողարկողի վերակազմակերպմամբ պայմանավորված կորպորատիվ գործառնություններ	
1.	Արժեթղթերի փոխարկման դիմում -հանձնարարական
2.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից ընդունված վերակազմակերպում իրականացնելու վերաբերյալ ընդունված որոշումը և վերակազմակերպման արդյուքները հավաստող փաստաթուղթը կից ներառելով Ընկերության վերակազմակերպման և արժեթղթերի փոխարկման կարգը և պայմանները:
3.	Վերակազմակերպման արդյունքում դադարած Ընկերության գործունեության դադարեցման պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրված փաստաթուղթը:
4.	Վերակազմակերպման արդյունքում գործունեությունը չդադարեցվող Ընկերության կանոնադրության կամ կանոնադրության համապատասխան փոփոխությունը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև համապատասխան փոփոխության պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը:
5.	Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված Ընկերության կանոնադրության պատշաճ վավերացված պատճենը, ինչպես նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը:
6.	Լիազորագիր (լիազորվածի առկայության դեպքում) և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

2.2.3 Արժեթղթերի ձեռքբերմամբ/հետգնմամբ պայմանավորված կորպորատիվ գործառնություններ	
1.	Արժեթղթերի ձեռքբերման/հետգնման դիմում և հանձնարարական:
2.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից կորպորատիվ գործողություն իրականացնելու վերաբերյալ ընդունված որոշումը:
3.	Լիազորագիր (լիազորվածի առկայության դեպքում) և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:
2.2.4 Բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջի հիման վրա կորպորատիվ գործառնություններ	
1.	Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համապատասխան որոշման պատճեն:
2.	Հետգնման և փոխանցման Հանձնարարականներ:
3.	Հետգնվող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա գումարի դեպոնացումը հավաստող փաստաթղթի/փաստաթղթերի պատճենները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր: Ընդ որում, գումարի դեպոնացումը հավաստող փաստաթուղթը պետք է պարունակի առնվազն համապատասխան հատուկ հաշվի տեսակի անվանումը, հաշվեհամարը, տվյալներ առ այն, որ դրանում դեպոնացված համապատասխան գումարը կարող է ստացվել համապատասխան արժեթղթերի սեփականատիրոջ կողմից:
2.2.5 Բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջի հիման վրա կորպորատիվ գործառնություններ	
1.	Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համապատասխան որոշման պատճեն:
2.	Թողարկողի կողմից ձեռքբերման Հանձնարարականներ՝ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» կամ «Առաքում վճարման դիմաց»:
3.	Բաժնետերերի կողմից վաճառքի Հանձնարարականներ՝ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» կամ «Առաքում վճարման դիմաց»:
4.	ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր:
2.2.6 Արժեթղթերի մարմամբ կամ չեղյալացմամբ պայմանավորված կորպորատիվ գործառնություններ	
1.	Արժեթղթերի մարման/չեղարկման դիմում և հանձնարարական:
2.	Թողարկողի կառավարման համապատասխան մարմնի կողմից կորպորատիվ գործողության իրականացման մասին որոշումը:
3.	Կորպորատիվ գործողությունը պետական համապատասխան մարմնի կողմից գրանցման փաստը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե կորպորատիվ գործողության արդյունքները տվյալ փուլում ենթակա են պետական գրանցման:
4.	Կանոնադրության կամ կանոնադրության համապատասխան փոփոխության պատճենը, եթե կորպորատիվ գործողության արդյունքները տվյալ փուլում ենթակա են կանոնադրության մեջ արտացոլման:
5.	Լիազորագիր (լիազորվածի առկայության դեպքում) և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

3 Ռեեստրի վարման պայմանագրի լուծում

№	Անվանումը
1.	Ռեեստրի վարման պայմանագրի լուծման Դիմում՝ ուղղված Կենտրոնական Դեպոզիտարիայի

	գործադիր մարմնի ղեկավարին:
2.	Իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից տեղեկանք կամ համապատասխան գրանցումը հավաստող այլ փաստաթուղթ, եթե ռեեստրի վարման պայմանագրի լուծման համար հիմք է հանդիսանում պետական համապատասխան գրանցումը:

4 Համակարգից տեղեկությունների տրամադրում

№	Անվանումը
1.	Թողարկողի կողմից թողարկված Արժեթղթերի սեփականատերերի (Անվանատերերի) ցուցակի տրամադրման դիմում, որը պետք է պարտադիր պարունակի հետևյալ տեղեկությունները. 1) Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ, ԱՆԾ կամ արժեթղթերի դասը և/կամ տեսակը, 2) Ցուցակի կազմման ամսաթիվը, 3) ամսաթիվը, որի դրությա մբ պետք է ներկայացվեն Ցուցակում ներառված տեղեկությունները, 4) Ցուցակի տրամադրման ձևը՝ թղթային (փոստով կամ առձեռն) կամ Էլեկտրոնային:
2.	Լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ վեջինիս լիազորությունները հավաստող փաստաթուղթ և անձը հաստատող փաստաթուղթ:

5 Համակարգում տվյալների փոփոխում

№	Անվանումը
	5.1 Թողարկող հանդիսացող Հաճախորդի դեպքում՝
1.	Թողարկողի մասին տեղեկությունների փոփոխությունների դիմում- հանձնարարական:
2.	Համապատասխան փոփոխության պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե տվյալ փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:
3.	Համապատասխան փոփոխությամբ պայմանավորված՝ կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխությունը կամ վեջիններիս պատշաճ վավերացված պատճենը, եթե տվյալ փոփոխությունը ենթակա է կանոնադրության մեջ արտացպման:

6 Լրացուցիչ ծառայություններ

№	Անվանումը
1.	Դիմում՝ համապատասխան ծառայության մատուցման պայմանագրի կնքման համար՝ ներկայացնելով ծառայության յուրահատկությունից բխող անհրաժեշտ և օրենքով սահմանված փաստաթղթեր:
2.	Արժեթղթով հավաստատված իրավունքի սահմանափակման, նախապատվության իրավունքի պահպանման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներ պարունակող փաստաթղթերի(այդ թվում կանոնադրություն,համաձայնագիր,պայմանագիր, ժողովի որոշում և այլն) բնօրինակը: Այն դեպքում, երբ նախապատվության իրավունքի կիրառման համար Թողարկողի կողմից առանձին կարգ չի սահմանվում, ապա Թողարկողի դիմումի համաձայն նախապատվության իրավունքի կիրառման և պահպանման հսկողության նկատմամբ Բանկի կողմից կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներ:

Ընդհանուր դրույթներ

1. Արժեթղթերի ռեեստրի վարման ծառայության մատուցման նպատակով վերոնշյալ գործառույթների համար սահմված փաստաթղթերից բացի Բանկը կարող է պահանջել այլ լրացուցիչ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության:
2. Հաճախորդի կողմից փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակ փաստաթղթերի տեսքով, եթե Բանկը հնարավորություն չունի ինքնուրույն ձեռք բերելու նշված փաստաթղթերը կամ պատճենների տեսքով, եթե այդպես է սահմանված սույն ցանկով տվյալ փաստաթղթի պահանջը: Այն դեպքում, երբ պատճենահանումը կատարվել է բնօրինակից՝ Բանկի իրավասու ներկայացուցչի կողմից, պատճենի վրա նշվում է «Իսկականի հետ ճիշտ է»:
3. Ոչ ռեզիդենտ թողարկողների կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է ապոստիլացված կամ վավերացված լինեն արտերկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսության կողմից, իսկ ԱՊՀ երկրների և Վրաստանի դեպքում՝ նոտարի կողմից, ընդ որում, չի պահանջվում այն փաստաթղթերի ապոստիլացում/վավերացում, որոնք հնարավոր է առցանց արտահանել համապատասխան պաշտոնական կայքերից կամ եթե այդ փաստաթղթերի իսկությունը հնարավոր է ստուգել շտրիխ կոդով/QR կոդով կամ որևէ ծրագրի միջոցով: Փաստաթղթերը կարող են ներկայացվել առանց ապոստիլի, եթե փաստաթղթերը ծառայությունների մատուցման շրջանակներում ներկայացված հանձնարարականների (կամ հաճախորդի կողմից անձամբ և իր ստորագրությամբ տրված գրությունների) և հարցումների բնօրինակներ են: Բանկը, որպես կանոն, չի պահանջում անգլերեն կամ ռուսերեն լեզուներով ներկայացված փաստաթղթերի թարգմանություն: Այլ լեզուներով փաստաթղթերի ներկայացման դեպքում Բանկը պահանջում է դրանց նոտարական վավերացմամբ հաստատված հայերեն թարգմանությունները: